



## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծնողներս: Ուսմանս ընթացքը: Սուրբ  
Էջմիածնի միաբան: Երգիչ և ուսուցիչ:  
Մայր Աթոռում: Համերգներս և դասա-  
խոսություններս: Գովաձքներս:

Ծնվել եմ 1869 թվին, սեպտեմբերի 26-ին. Փոքր Ասիայի Կուտինա կամ Բյութաֆիա քաղաքում: Երրորդ օրն ինձ մկրտել են և աւուունս դրել Սողոմոն:

Հայրս՝ Գեորգ Սողոմոնյանը՝ քյութաֆիացի է. իսկ մայրս՝ Թագուհի Հովհաննիսյանը քուրասցի: Երկուսն էլ հայ են:

Հորս ու մորս ազգատոհմն ի բնէ ձայնել է: Հայրս ու հորեղբայրս՝ Հարություն Սողոմոնյանը հայտնի դպիր են եղել մեր քաղաքի ու Թեոդորոս եկեղեցում: Մորս և հորս տաճիկ լեզվով և եղանակներով հորինած երգերը, որոնցից մի քանիսն արդեն գրել եմ 1893 թվին հայրենիքումս, դեռ երգում են մեծ հիացմունքով մեր քաղաքի ծերերը:


Մայրս վախճանվել է 1870 թվին. իսկ հայրս՝ 1880 թվին: Ծնողներիս մահից հետո, ինձ՝ միամոր գավակիս դաստիարակել և ուսմանս մասին մեծ հոգ է տարել հորակյան տատս Մարիամը:

1876 թվին էր, երբ ստաշին անգամ ոտքս դրի դպրոցի շենքը: Մեր քաղաքի վարժարանը մի չորս բաժանմունք ունեցող դպրոց էր: 1880 թվին ավարտեցի այդ վարժարանը և հայրս, իր մահից չորս ամիս առաջ, ինձ ուղարկեց Բուրսայի վարժարանը: Դեռ տարին չբոլորած, հորս մահվան պատճառով, մեր քաղաքը վերադարձա:

1881 թվին մեր վիճակի առաջնորդը՝ Գեորգ վարդապետ Դերձակյանը պետք է գնար սուրբ Էջմիածին եպիսկոպոս ձեռնադրվելու: Գեորգ Դ Ամենայն Հայոց կաթողիկոսը հրամանագրել էր, որ առաջնորդը հետը բերել և մի որք աշակերտ իր ու Էջմիածնում հիմնած Մայր Աթոռի Գեորգյան ճեմարանի համար: 20 որբի մեջ վիճակն ինձ ընկավ և առաջնորդն ինձ ու Էջմիածին բերավ:

1881/82 ուսումնական տարեշրջանին՝

սեպտեմբերի 15-ից մտա Գեորգյան հոգևոր ճեմարանն իբրև գիշերօթիկ սան և ավարտեցի դպրանոցական ու լսարանական բա-



### Կոմիտաս վարդապետի ձեռագիրը

Ժինը 1892/93 ուսումնական տարեշրջանին:

1896 թվից, հայ հայտնի բարեգործ Աղերսանդր Մանթաշյանի օժանդակությամբ, գնացի Բերլին երաժշտական ուսումնական կուրսը: Դիմեցի երաժշտական ուսումնական կուրսը: Դիմեցի աշխարհահայտնի շոթակահար Հովսեփ Հովակիմին, որ Բերլինի արքունի երաժշտանոցի տեսուչն էր: Խորհուրդ տվավ մտնել Ռիխարդ Շմիտթի մասնավոր երաժշտանոցը: Ուսուցչապետ և արքունի երաժշտագետ տեսուչ Ռիխարդ Շմիտթը հանձն առավ ինձ հետ պարսպիկ առանձնապես:


Թեև ծանոթ էր ինձ դաշնակի ուսումը միևնույն կերպ հաջորդությունները, բայց սկզբիցն սկսեցիք, որ հիմնավոր լինի: Շմիտթի մոտ մնացի ուղիղ երեք տարի՝

<sup>1</sup> Սողոմոնյաններն ու Բյութաֆիայի հայ հին ընտանիքները հայկական գոթ ցեղիցն են և գաղթել են ժ՛Ը դարու վերջում Գողթն վազատի Ցղնա գյուղից:

1896 թվի հունիսից մինչև 1899 թվի հունիսը: Ավարտեցի տեսական ու մասնավանդ գործնական երաժշտության ամբողջ դասընթացը:

Միաժամանակ իսկական ուսանող գրվե-

Շեմարան մտած օրից երգիչ և Մայր Աթոռի աչքի ընկնող ձայնեղ մանուկներից մեկն էի: Երբ Գեորգ Դ կաթողիկոսն իջնում էր Վեհարանից՝ Մայր տաճար, ես և իմ մի ձայնեղ ընկերս կանգնում էինք Նորա Աթո-



Կոմիտաս վարդապետի վկայականը՝ ճեմարանի դպրոցական բաժնի անջատման կապակցությամբ

ցա Բերիկի արքունի Ֆրիդրիխ-Վլիկելմ համալսարանի փիլիսոփայական բաժնում և լրացրի երաժշտության փիլիսոփայական պատմական դասընթացը: Ուսուցչապետներս էին F. Belfermann, G. Friedlander և O. Heischer:


1899 թվին, սեպտեմբերին վերադարձաւ և Էջմիածին:

Իեռ Գեորգյան ճեմարանի Չ դասատուս աշակերտ էի, երբ Մակար Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրով մտաւ և Էջմիածնա միաբանության շարքը: 1890 թվին, հունիսի 8-ին ձեռնադրվեցաւ ավագ սարկավագ, 1893 թվին, սեպտեմբերի 11-ին, Մկրտիչ Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրով ձեռնադրվեցաւ արեղա: 1895 թվին, փետրվարի 26-ին ձեռնադրվեցաւ վարդապետ: Արտասահմանում ես վարդապետ-ուսանող էի:

նի մտտ և այնպես երգում միայնակները: Մեր երգելու ժամանակ ծերունի Հայրապետի արցունքները գլորվում էին և թափվելով երկար ու ճեմնակ մորուսի վրայով թարնրվում էին փիլոնի ծայքերի մեջ:

Մակար Ա-ի օրով արդեն գլխավոր դասապետ էի Մայր Աթոռում Դ դասարանիցն սկսած: Մկրտիչ Ա-ի օրով 1893-ի սեպտեմբերի սկզբին նշանակվեցի ճեմարանի երաժշտության ուսուցիչ: Դաս էի տալի հայ եկեղեցական երաժշտությունը հայ նորագույն և եվրոպական ձայնանիշերով մինչև արտասահման գնալու: Երաժշտանոցն ու համալսարանն ավարտելուցս հետո 1899-ի սեպտեմբերին վերսկսեցի ճեմարանի դասերս, նշանակվեցաւ Մայր Աթոռի երաժշտապետ և վարում եմ Մայր տաճարի բազմաձայն խումբը:

Առաջին համերգը միացած էր Բերլինի Բ. դասախոսության հետ: Եվրոպայում մեծ համերգս տեղի ունեցավ Փարիզում, Փարիզի հայկական միության ձեռնարկությամբ: Այս համերգով նպատակ ունեի ծանոթացնել Ֆրանսայի երաժիշտ աշխարհին հայ ժողովրդի եկեղեցական և ժողովրդական սեղծագործություններին: Այս համերգի մասին



Կոմիտաս վարդապետի մկրտության վկայականը

խոսեցին գրեթե բոլոր երաժշտական հրատարակությունները. իսկ մանրամասնաբար La mercure Musical 2-e Année Mos 2<sup>e</sup> -- 24, 15 Decembre. p. 422—424: Փարիզի համերգից հետո հրավեր ստացա Չլիցերիայի հայ ուսանողություններից համերգներ տալու համար հետևյալ քաղաքներում՝ Ցյուրիխ, Լոզան և Ժնև, Կովկասում համերգներ եմ տվել և Էջմիածին, Երևան, Տփլիսի և Բագու:

Անդրանիկ դասախոսությունն արել եմ «Հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին» ավարտելուցս անմիջապես հետո Բերլինի համերգ կցելով, 1907 հունվարի 13-ին:

Մյուս դասախոսությունները նույն նյութի մասին արել եմ սուրբ Էջմիածնա Գեորգյան ճեմարանում, Իգդիր գյուղում, Տփլիսիում, Բագու, Փարիզ, Բերն, Լոզան, Ժնև, Վենե-

տիկ քաղաքներում հայերեն լեզվով հայ հասարակության համար:

Իմ աշխատություններս են՝

Ա. Տարված

Ա. Տարված հոդվածներ՝

1. Հայոց եկեղեցական եղանակները. Արարատ.
2. Նյութեր ԺԹ դարու հայոց երաժշտության պատմության. Արարատ.
3. Հինադատական հոդվածներ. Արարատ.

4. Das Interpunctions system der Armerier (Sammelbande der Internationalen Musik-Gesellschaft. Jahrgang I. Heft 1. Oktober-November 1899, Zeite; 54—64.

5. Armeniens Volkstümliche Reizentanze (Zeitschrift der Armenischen Philologie). 1901. I. B. H.

6. La Musique Rustique Arménienne. (Mercure Musical et Bulletin Français de la Société Internationale de Musique. (Section de Paris) III. Année, 15 Mai 1907, pp. (472—490).

Բ. Երգարաններ՝

1. Ըստ Ակնա ժողովրդական երգերի (25 հատ). 1895, և Էջմիածին (հայ ձայնագիրներով).

2. Հազար ու մի խաղ. ա. Հինգյակ. 1904.

3. Հազար ու մի խաղ. բ. Հինգյակ. 1905. Մանկություն. Հազար ու մի խաղերը պարոն Մ. Արեղյանի հետ.

4. Mélodies Kurdes (13 հատ) Imprimerie de Musique de P. Jerrgenson, Moscou, 1905 (?) (3).

5. «Հայ քնար» հավաքածու գեղջուկ երգերի. La Lyre Arménienne. Recueil de chansons Rustiques, Imp. C. G. Roder, Paris.

6. Հատով երգեր զանազան թերթերում:

Գ. Անտիպ աշխատություններ՝

1. Հայ ժողովրդական երգեր.

2. Հայ հոգևոր երգեր.

3. Օտար երգեր զանազան լեզուներով

4. Տանհիլ երգեր.

5. Չանազան պարեր նվագարանների համար.

6. Ուսումնասիրություն հայ ժողովրդական երաժշտության.

7. Ուսումնասիրություն հայ եկեղեցական երաժշտության.

8. Խազարանություն.

9. Չանազան երաժշտության դասագրքեր.

10. Թարգմանություններ (երաժշտության վերաբերյալ):